# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Սեպտեմբերի 2-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ աբղ. Շաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ լեալ եղեւ ամբոխ բազում, եւ գթացաւ ի նոսա» (Մարկ. Զ 34) բնաբանով քարոզ խոսեց:

***Սեպտեմբերի 8-ին, շաբաթ.- Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արիստակես աբղ. Այվազյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Սեպտեմբերի 9-ին, կիրակի.- Ե կիրակի զկնի Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գարեգին աբղ. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Առաքեա, Տէր, զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո» (Պատարագամատույց) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Սեպտեմբերի 16-ին, կիրակի.- ԽԱՉՎԵՐԱՑ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Որ զանարատ բազուկս քո ի խաչին տարածեցեր, Քրիստոս Աստուած, եւ նշան յաղթութեան եդուր մեզ: Սովաւ զկեանս մեր պահեա» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի.- Տօն է Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ավետիս աբղ. Սահակյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 29) բնաբանով քարոզ խոսեց:

***Սեպտեմբերի 20-ին, հինգշաբթի.- Տօն է Եկեղեցւոյ:***

Այսօր Ս. Տրդատի Բաց Խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ռսկան արքեպս. Գալփաքյանը:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Սեպտեմբերի 22-ին, շաբաթ.- Տօն է Խաչի:***

Այսօր Ս. Տրդատի Բաց Խորանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը:

***Սեպտեմբերի 23-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Քեզ վայել է օրհնութիւն, Աստուած, ի Սիօն, եւ քեզ տացցին աղօթք Երուսաղէմ» (Ճաշոց) բնաբանով քարոզ խոսեց:

***Սեպտեմբերի 29-ին, շաբաթ.- Սրբոցն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, Աղուկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին:***

Այսօր Մայր Տաճարում, Ս. Գևորգի խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը:

***Սեպտեմբերի 30-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Սրբոյ Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հընթացս Ս. Պատարագի տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Եպիսկոպոս ձեռնադրվեցին Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Տ. Սիոն վրդ. Ադամյանը, Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը և Տ. Եզրաս վրդ. Ներսիսյանը: Ձեռնադրության կարգից հետո Վեհափառ Հայրապետը հավուր պատշաճի քարոզ խոսեց: